ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 3

ԲԱԺԻՆ 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները 5

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 5

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները 6

ԲԱԺԻՆ 3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 7

3.1.Գազափոխադրման համակարգ 7

3.2. Գազաբաշխման համակարգ 8

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 9

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը 9

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 11

Եզրակացություններ 12

Հղումներ օգտագործված նյութերին 13

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2016 թվականի աշխատանքային ծրագրի 29-րդ կետի **[Որոշում 1]** և արտացոլում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի (այսուհետև՝ Կայան) 2015 թվականի ներդրումային ծրագրի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային ծրագիրը **[Որոշում 2, Եզրակացություն]** և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը **[Հաշվետվություն]**:

ԲԱԺԻՆ 1.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

Կայանի 2015 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել կայանի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման, ինչպես նաև բնականոն և հուսալի աշխատանքը ապահովելու ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2015 թվականի ընթացքում իրականացնել 307,8[1] մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- կայանի հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացման ու արդիականացման ուղղությամբ ներդրումներ՝ 173,0 մլն դրամ,

[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

- կայանի բնականոն և հուսալի շահագործման ապահովման ուղղությամբ ներդրումներ՝ 134,8 մլն դրամ,

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

Գրաֆիկ 1



Կայանի հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացման և արդիականացման ուղղությամբ նախատեսվող ներդրումների զգալի մասը (49%) նախատեսվում էր ուղղել կոմպրեսորային կայանքից հետո բնական գազի ջերմաստիճանի իջեցման միջոցառումների իրականացմանը: Նախատեսվում էր նաև վերականգնել և արդիականացնել Էլեկտրաքիմիական պաշտպանության կայանները, պահուստային էլեկտրասնուցման համակարգ ներդնել, ինչպես նաև վերազինել շոգետուրբինի կարգավորման և պաշտպանության համակարգերը:

Կայանի բնականոն և հուսալի շահագործման ապահովմանն ուղղությամբ հիմնականում (65%) նախատեսվում էր ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում: Մասնավորապես էլեկտրական լաբորատորիայի չափիչ սարքերի ձեռքբերման, կայանից հեռացող ջրերում օքսիդացող կենսաքիմիական օրգանական նյութերի քանակի, յուղի բռնկման ջերմաստիճանի որոշման սարքերի ձեռբերման ուղղությամբ: Նշված ենթաուղղությամբ համաձայնեցված ներդրումների շրջանակում նախատեսվում էր նաև ընդլայնել հաստոցային պարկը և ձեռք բերել մեքենա մեխանիզմներ:

ԲԱԺԻՆ 2.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն կայանի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2015 թվականի ընթացքում կատարել է 242,1 մլն դրամի կապիտալացվող աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 206,2 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 35,9 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից 2015 թվականի ընթացքում փաստացի իրականացված՝ ավարտված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Կայանի հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացում ու արդիականացում	173.0	121.8	85.9	50%
1.1	Կայանի պահուստային էլեկտրասնուցման համակարգի ներդրում (500կՎտ հզորության դիզելային շարժիչի ձեռքբերում և տեղակայում)	47.0	85.9	85.9	183%

Աղյուսակ 1
(շարունակություն)

2	Կայանի բնականոն և հուսալի շահագործման ապահովում	134.8	120.3	120.3	89%
2.1	Ժամակակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում	87.5	81.3	81.3	93%
2.2	Հաստոցային պարկի ընդլանում	21.3	19.1	19.1	90%
2.3	Մեքենա-մեխանիզմների ձեռքբերում	26.0	19.9	19.9	77%
Ընդամենը		**307.8**	**242.1**	**206.2**	**67%**

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են 2015 թվականի ընթացքում կատարված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2
մլն դրամ

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**0.3**	**0.13%**	**0.2**	**0%**
2	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**120.3**	**50%**	**120.3**	**50%**
3	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**121.5**	**50%**	**85.7**	**35%**
3.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	3.7		2.7	
3.2	*նյութական ծախսումներ*	31.7		17.7	
3.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	79.6		65.3	
3.4	*նախագծային աշխատանքներ*	6.5		-	
3.5	*այլ*	-		-	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**242.1**		**206.2**	

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից իրականացված և շահագործման հանձնված ներդրումների մեծ մասն իրականացվել է սեփական ուժերով:

ԲԱԺԻՆ 3.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1. Կայանի հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացում ու արդիականացում

2015 թվականի ընթացքում նշված ենթաուղղությամբ նախատեսվում էր 173,0 մլն դրամ ուղղել էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների վերականգնման և արդիականացման նպատակով նոր կաթոդային փոխակերպիչների տեղադրման, Կայանի պահուստային էլեկտրասնուցման ապահովման նպատակով ինքնաշխատ շարժիչի տեղակայման, կոմպրեսորային կայանքից հետո բնական գազի ջերմաստիճանի իջեցման միջոցառումների իրականացման նպատակով կոմպրեսորային կայանքից հետո գազաջրային ջերմափոխանակիչ սարքի տեղակայման, շոգետուրբինի կարգավորման և պաշտպանության համակարգերի վերազինման ուղղությամբ:

2015 թվականի ընթացքում նշված ենթաուղղությամբ իրականացվել են 121,8 մլն դրամի ներդրումներ, որից 85,9 մլն դրամի աշխատանքներն հանձնվել են շահագործման: Մասնավորապես ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 28,9 մլն դրամ արժեքով 500կՎտ հզորության դիզելային շարժիչ, որի ձեռքբերման նպատակով համաձայնեցված էր 47,0 մլն դրամ, ինչպես նաև 53,0 մլն դրամ արժեքով դիզելային մասնաշենքի էլեկտրական սարքավորումներ և 4,0 մլն դրամ արժեքով շինարարական աշխատանքներ:

3.2. Կայանի բնականոն և հուսալի շահագործման ապահովում

2015 թվականի ընթացքում նշված ենթաուղղությամբ նախատեսվում էր 134,8 մլն դրամի ներդրումներ իրականացնել ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման, հաստոցային պարկի ընդլայնման և մեքենա-մեխանիզմների ձեռքբերման նպատակով:

2015 թվականի ընթացքում Կայանն այս ուղղությամբ իրականացրել և շահագործման է հանձնել 120,3 մլն դրամի ներդրումներ:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում» ընթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 87,5 մլն դրամի ներդրումներ՝ էլեկտրական լաբորատորիայի չափիչ սարքերի, «Թթվածնի կենսաբանական պահանջ-5»-ի որոշման, յուղի ջերմաստիճանի որոշման սարքերի ձեռքբերման և տեղակայման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման են հանձնվել 81,3 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Էլեկտրական լաբորատորիայի չափիչ սարքերի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 80,0 մլն դրամ՝ 118 միավոր սարքերի ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 75,0 մլն դրամի սարքեր:

«Թթվածնի կենսաբանական պահանջ-5»-ի որոշման սարքի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 1,5 մլն դրամ: Փաստացի ձեռք է բերվել մեկ ինկուբատոր WIG-50 /թերմոստատ 50լ /՝ 0,4 մլն դրամ արժեքով, ինչը համաձայնեցված չէ ներդրումային ծրագրով:

«Յուղի բռնկման ջերմաստիճանի որոշման սարքի ձեռքբերման և տեղակայման» նպատակով 2015 թվականին համաձայնեցված էր 6,0 մլն դրամ: Սարքավորման փաստացի ձեռք բերման արժեքը կազմել է 5,9 մլն դրամ:

«Հաստոցային պարկի ընդլայնում» ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 21,3 մլն դրամ՝ տարբեր տեսակի հաստոցների, արհեստանոցի դազգահների և գործասեղանների ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 4 հաստոցներ՝ 16,9 մլն դրամ ընդհանուր արժեքով, և փականագործի 9 դազգահներ՝ 2,2 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Մեքենա-մեխանիզմների ձեռքբերում» ընթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 26,0 մլն դրամ ավտոաշտարակի և հերթապահ մեքենաների ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել մեկ ավտոաշտարակ՝ 14,9 մլն դրամ արժեքով, և մեկ հերթապահ մեքենա՝ 5,1 մլն դրամ արժեքով:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2015 թվականի ընթացքում Կայանի կողմից փաստացի ավարտված 206,2 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. 4,4 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով,
2. հաշվի առնելով, որ Կայանի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության սակագնի 2015 թվականի մեծության հաշվարկման ժամանակ սակագնի ծախսային հոդվածներում ներառվել է Կայանի աշխատողների փաստացի թվաքանակով հաշվարկված միջին աշխատավարձը, ապա ավարտված աշխատանքների մասով հաշվետվությամբ ներկայացված 2,7 մլն դրամ ծավալով կապիտալացված աշխատավարձից ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքների մասով 1,2 մլն դրամ նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից,
3. հաշվի առնելով, որ լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում Կայանի լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի լուծարման

արդյունքում մուտքագրված նյութերի արժեքը՝ 11,0 մլն դրամ, նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից,

4. իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 33,7 մլն դրամով՝ Կայանի պահուստային էլեկտրասնուցման համակարգի ներդրում (500կՎտ հզորության դիզելային շարժիչի ձեռքբերում և տեղակայում) ենթաուղղությամբ, որը ևս նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ուղղությամբ:

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ Կայանի կողմից 2015 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3
մլն դրամ

1	**Իրականացված ներդրումներ**	**242.07**
2	**Անավարտ աշխատանքներ**	**35.89**
3	**2015 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը**	**206.18**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**50.28**
4.1	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումներ	4.40
4.2	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներ	1.21
4.3	Լուծարված հիմնական միջոցներ	10.98
4.4	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	33.69
5	**2015 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**155.90**

Եզրակացություններ

Ամփոփելով Կայանի ներդրումային գործունեության արդյունքները նշենք, որ 2015 թվականի ներդրումային ծրագիրն իրականացվել է 67 %-ով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 242,1 մլն դրամի ներդրումներ, որից 206,2 մլն դրամի ներդրումներն հանձնվել են շահագործման:

Շահագործման հանձնված հիմնական միջոցներից 50,3 մլն դրամի ներդրումները, ընդհանուրի 24%-ը, չեն ներառվել փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Արդյունքում 2015 թվականին շահագործման հանձնված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 155,9 մլն դրամ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի №439Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 4-ի №17Ա որոշումը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Հաշվետվություն - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» հիմնարկի կողմից 2015 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ապրիլի 27-ի №01-35/2223 գրությամբ ներկայացված հաշվետվությունը.

Եզրակացություն- 2015 թվականի հոկտեմբերի 14-ի №ՌՆ-2215Լ գրությամբ ներկայացված եզրակացություն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի նույն թվականի սեպտեմբերի 29-ի №01-35/4603 գրությամբ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.